«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը

Հաստատություն՝ «Երևանի հ. 109 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Սաֆարյան Ալիսա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....3
Գլուխ 1. Հայրենասիրական դաստիարակություն.....5
Հետազոտական մաս.....9
Եզրակացություն.....15
Գրականության ցանկ.....16

Ներածություն

Հայրենասիրությունն սկսվում է հայրենաճանաչությունից:

Այսօր առավել քան երբևէ կարևորվում էմ հայրենասիրական դաստիրակության հիմնախնդիրը: Մշտապես պատերազմի մեջ գտնվող, թշնամիներով պարփակված երկրում հայրենասիրությունը համարվում է կարևորագույն արժեքներից մեկը:

21-րդ դարում գնահատվում են այնպիսի հատկանիշներով օժտված անհատներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հայրենասիրությունը, բարոյականությունը, աշխատասիրությունը: Նախադպրոցական տարիքում է դրվում այսպիսի որակների հիմքը:

Հայերանասիրության ձևավորումը սկսվում է ընտանիքից և շարունակում ձևավորվել կրթական հաստատություններում: Հայրենասեր քաղաքացի դաստիրակելու գործից անմասն չէ մնում նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

Իհարկե այս տարիքում հայրենասիրությունը դրևորվում և ընկալվում է առավել նեղ իմաստով, բայց այս տարիքում է դրվում հայրենասեր քաղաքացի կերտելու հիմքը:

Աշխատանքի շրջանակներում նախ փորձել ենք, հիմնվելով առկա գրականության վրա, ներկայացնել հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ առկա տեսակները, իսկ աշխատանքի հետազոտական հատվածում ներկայացրել ենք մեր կողմից իրականացրած աշխատանքը՝ ուղղված հայրեասիրության ձևավորմանը:

Աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել հայրենասիրական դաստիրակության կարևորությունը, հայրենասեր անհատ ձևավորելու ուղիներն ու մեթոդները:

Աշխատանքը կազմված է ներածությունից, աշխատանքի բուն մասից, որը բովանդակում է երկու գլուխներ, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ներածական հատվածում հիմնավորվել է աշխատանքի թեմայի ընտրությունը, նախադրվել են աշխատանքի նպատակը և ներկայացվել է աշխատության կառուցվածքը: Աշխատանքի արդյունք համարվող

եզրահանգումներն ամփոփվել են եզրակացությունների բաժնում: Աշխատանքի տեսական հիմք համարվող գրականությունը ներկայացված է համապատասխան բաժնում:

Գլուխ 1. Հայրենասիրական դաստիարակություն

Լինել հայրենասեր նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության համար, հարգել հայրենիքում սահմանված կարգն ու կանոնը, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտությունների, տեխնիկայի զարգացմանը: Մեր սերունդների հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդանշանները՝ գերբ , դրոշը, օրհներգը, զինանշանը:

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա[1]:

Նշանակում է՝ հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»: Ցանկացա մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի հանդամասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն: Դաստիարակները, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիրակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու

[1] Ամիրջանյան Ա. Յու., Սահակյան, Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005, էջ 349:

պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ[2]:

«Հայրենիքը միայն այն վայրը չէ, ուր մենք ծնվել ենք: Այն մեր երկիրն է: Պատահական չէ, որ մեր գիտակցության մեջ երկու բառեր միշտ իրար կողքի են՝ մայր հայրենիք»:

Գլոբալացման պայմաններում, երբ տեղի են ունենում ոչ միայն մշակույթների ներթափանցում, ինտեգրում, այլև բացասական դրսևորումների ներթափանցում, կարևոր է դառնում բարոյական արժեքներից հատկապես հայրենասիրության դաստիարակությունը[3]:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության հիմնախնդիրը, այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նախադպրոցական ուսումնական հաստատությունը, և հենց այս օղակից պետք է սկսել կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող քաղաքացի:

Հետևապես, այժմ մանկապարտեզում պետք է սկսվի երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որոնք մեր ինքնատիպությունն են համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Հայեցի դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներ չյուրացրած հայը չի կարող իր ազգի լիարժեք անդամը լինել:

Դեռևս նախադպրոցական տարիքում, պարտավոր ենք ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Սերմանել սեր հայրենիքի, պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

---

[2] Ամիրջանյան Ա. Յու., Սահակյան, Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005, էջ 349:

[3] Դավթյան Ն. Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 47:

Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր են խաղում ազգային տոները, ազգային երգերն ու պարերը, հայրենքին նվիրված բանաստեղծությունները, ազգային խորհրդանիշները:

Դաստիարակը պետք է խոսի նաև այսօրվա հերոսների մասին, այն ողողելով հիացմունքի ու հպարտության զգացումներով:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, հասարակական հարաբերություններում և դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Դրանք ստանում են գաղափարական հիմնավորում և մարդը սովորում է, թե ինչպես պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է:

Դաստիարակության կարևոր կողմերից է ազգային ինքնագիտակցության, ազգային պատկանելության խնդիրը, և հարկ է սովորողի գիտակցությանը հասցնել հայրենասերի բարձր կոչումը, հայրենիքի վեհ գաղափարը և նախնիների փառավոր անցյալը:

Այդ առումով կարելի է նշել Նժդեհի հետևյալ միտքը. «Հայաստան աշխարհը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը, Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունները»[4]:

Հայրենասիրական դաստիարակությունը հանդիսանում է կրթական համակարգի առաջնային ուղղություններից մեկը, քանի որ նպաստում է հայրենասիրական վեհ գաղափարի ձևավորմանը, քաղաքական պարտքի կատարման պատրաստակամությանը, հայրենիքի պաշտպանության կարևոր սահմանադրական պարտականությունների կատարմանը:

Հայրենասիրությունը հասարակական և պետական կառույցի, մարդու և հասարակության կենսունակության գաղափարախոսական հիմքն է: Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է կրթական համակարգի բոլոր օղակների ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու

[4] Ղազարոսյան Ա., Սովորողների հայրենասիրության դաստիարակության ուղիները , «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 34:

պատանեկությունն ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու, հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

Այս հարցն էլ ավելի սուր է դրսևորվում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրության գիտակցության մակարդակի նվազումը, որը պայմանավորված է գլոբալացումով, երբ տեղի են ունենում ոչ միայն մշակույթների ներթափանցում, ինտեգրում, այլև բացասական դրսևորումների ներթափանցում: Այսօր, ավելի քանի երբևէ, կարևոր է դարձել հայրենասիրության դաստիարակությունը, որը պատմության դասավանդման հիմնախնդիրներից կարևորագույնն է:

Այնուհանդերձ ազգային դաստիարակության՝ բազմամշակութային դաստիարակությանը զուգորդման սկզբունքի համաձայն՝ անձի զարգացման և դաստիարակության գործում պետք է հիմնվել ազգային դաստիարակության համակարգի, ազգային ինքնագիտակցության ձևավորման, մշակութային ինքնության, ազգային դիմագծի, հոգեկերտվածքի, մենթալիտետի, ոգու, նկարագրի, ազգային հիշողության պահպանման գաղափարական հիմնադրույթների վրա: Այնուհանդերձ գլոբալացման անշրջելի գործընթացների, տեխնոլոգիական հեղաշրջումների, ժողովրդագրական տեղաշարժերի, միջմշակութային երկխոսության արդի ժամանակաշրջանի գերակայություններից են ազգային կամ մշակութահարմար դաստիարակության՝ բազմամշակութային դաստիարակությանը զուգորդման հրամայականը, այլ ազգերի ու ժողովուրդների մշակույթի, մենթալիտետի, հոգեկերտվածքի, հաղորդակցման միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվության տիրապետումը, դրանց նկատմամբ հարգանքի ու հանդուրժողականության ձևավորումը՝ որպես բազմամշակութային աշխարհում համակեցության, խաղաղության և համերաշխության կարևոր պայման: Ընդհանրապես, իրական կամ ճիշտ ըմբռնված ազգայինը իրական և ճիշտ ըմբռնված համամարդկայինի մասն է[5]:

[5] Թովմասյան Ա., Ազգային դաստիարակության տեղն եւ դերը համամարդկային դաստիարակության համակարդում, էջ 216:

Գլուխ 2. Հետազոտական մաս

Ինչպես նշեցինք հայրենաճանաչողությունը սկսվում է մեր բակից, մեր թաղամասից, մեր քաղաքից, իսկ հայրենաճանաչողության սահմանները անծայր են: Ստորև ներկայացրել ենք մեր կողմից իրականացրած քայլերը որոնք այս կամ այն կերպ նպաստում են երեխաների շրջանում հայրենասիրության, հայրենաճանաչության ձևավորմանը:

Հայրենիքը ճանաչելը, մեր տոները, երգերն ու պարերը, մեր մշակույթը, մեր գրականությունը ճանաչել է:

Օրինակ՝ այս լուսանկարում ներկայացված է Սուրբ Զատիկի տոնի սեղանը մեր մանկապարտեզում: Ցանկացած տոն նշելը միտված է ազգային մշակույթի ճանաչմանը: Տոնի նախապատրաստական աշխատանքները սկսում ենք ավելի վաղ: Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը:

Նախ մի քանի օր առաջ երեխաներին պատմում ենք, որ շուտով տոն է, ինչին է այն նվիրված, ինչ ծիսական երգեր կան տոնին նվիրված, սովորում ենք այդ երգերը, երեխաները պատմում են, թե ինչ գիտեն այդ տոնի մասին, այն ինչպես են նշում:

Արդյունքում Երեխան սովորում է ազգային ծեսերը, ազգային սովորույթները, ազգային ավանդական պարերը, հայկական ժողովրդական և ծիսական երգերը, ծիսական կերպարները, ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը, ծիսական կերակրատեսակները, ծիսական պարագաները: Ճանաչում է իր մշակույթը և իր հայրենիքը:

Ազգային մշակույթի իմացության, հայրենասիրության դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն Անկախության, Բանակի օրվան նվիրված տոները: Որոնք մշտապես մեծ շուքով են նշվում Հայաստանի մանկապարտեզներում: Այս միջոցառումների կազմակերպման արդյունքում երեխաները գաղափար են կազմում պետության, անկախության, բանակի կարևորության մասին: Միջոցառումների ժամանակ երեխաները սովորում են հայրենիքին նվիրված բանաստեղծություններ, երգեր, ազգային պարեր: Ծանոթանում են ազգային հերոսների հետ, իրենց շուրթերով պատմում նրանց սխրանքների մասին: Կրում են Հայկական բանակի համազգեստը, ներկայանում որպես փոքրի զինվորներ:

Այս տոները կարելի է համարել հայրենաճանաչության ուղղված կարևորագույն տոներից, որի արդյունքում ձևավորվում է մեծ սեր դեպի հայրենիքը:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայրենաճանաչությունը սկսում ենք մեր բակից, մեր թաղամասից, երեխաների և ծնողների մասկակցությամբ այցելել ենք Նոր Նորք վարչական շրջանում գտնվող Հայկի հուշարձանի շրջակայքը: Մինչ այդ երեխաներին պատմում ենք Հայկի և Բելի առասպելի մասին, պատմում ենք, որ Հայկը ապստամբեց Բաբելոնի տիրակալ Բելի դեմ, Վանա լճի մոտ Հայկը պատերազմեց Բելի դեմ, ջարդեց նրա զորքը, սպանեց նրան ու դրեց հայոց պետության հիմքը, ըստ այդմ՝ մեր երկիրը կոչվեց Հայք (Հայաստան):

Երեխաների հետ այցելել ենք նաև Տորք Անգեղի հուշանձանի շրջակայքը, երեխաներին պատմելով նաև Տորք Անգեղի առասպելը: Այցելել ենք նաև Գայի (Հայկ Բժշկյանց) հուշարձանի տարածք: Երեխաները մանկուց պետք է գիտակցեն, որ հուշարձանները մշակութային այն կոթողներն են, որոնք նոր շունչ ու կենդանություն են հաղորդում քաղաքին:

Հայրենասիրության դրսևորումներից մեկն է շաբաթօրյակը, որը կազմակերպել էինք մանկապարտեզի տարածքում: Շաբաթօրյակին մասնակցում էինք և՛ մենք, և՛ երեխաները: Օրինակ ծառայելով նրանց: Երեխան պետք է սիրի, մաքուր պահի իր շրջակայքը: Շաբաթօրյակի ժամանակ խնամեցինք նաև այգին, արդյունքում երեխաները սովորեցին, որ պետք է սիրել և մաքուր պահել մեր շրջապատը, խնամել ծառերն ու ծաղիկները:



Այս բոլորը հայրենասիրության փոքրիկ դրսևորումներ են, որոնք հետագայում կարող են դառնալ մեծ հայրենասերի ձևավորման հիմք:

Եզրակացություն

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ:

Հայրենիքի պահպանման հիմնական գործոնը հայրենասիրությունն է, որի գաղափարը դարերի ընթացքում հարստանում և սերնդից սերունդ է փոխանցվում պատմական հիշողության միջոցով:

Պետության կայացման գլխավոր հիմքը եղել ու մնում է հայրենասիրությունը: Առանց հայրենասիրության Հայրենիք գոյություն ունենալ չի կարող, հայրենիք պահել հնարավոր չէ: Հայրենիքը ժողովրդի բոլոր սերունդների դարավոր, հերոսական պայքարի արդյունքն է:

Հայրենասիրության դրսևումն է հայրենիքը սիրելը, այն մաքուր պահելը, հայրենակիցների սիրելը, օգնելը, հայրենիքը ճանաչելը, ազգային տոներին ծանոթ լինելը, նրանց խորհուրդները իմանալը, ազգային երգեր երգելը, պարեր պարելը, ազգային հերոսներին ճանաչելը, հուշակոթողներ, եկեղեցիներ այցելելը:

Դաստիարկները, պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Սերմանել սեր հայրենիքի, պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Ա. Յու., Սահակյան, Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005:
2. Դավթյան Ն., Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները, Վանաձոր, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Սիմ տպագրատուն 2015:
3. Թովմասյան Ա., Ազգային դաստիարակության տեղն եւ դերը համամարդկային դաստիարակության համակարդում:
4. Ղազարոսյան Ա., Սովորողների հայրենասիրության դաստիարակության ուղիները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, Սիմ տպագրատուն 2015: